ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՔԱՋԻԿ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍՄԿԿ XXVI համագումարի առաջ քաշած պարենային ծրագրի կենսագործումը պահանջում է գյուղատնտեսական մթերքների արտադրության հետագա վերելք, որը ապահովված է նաև հողային ռեսուրսների խելացի ու խնայողաբար օգտագործմամբ ու դրանց բերքատվության սիստեմատիկ բարձրացմամբ։ Սա ոչ միայն գյուղատնտեսությամբ զբաղվող առանձին տնտեսություններին, այլև ամբողջ հասարակությանը հուզող ժամանակակից կարևորագույն հարցերից է։

ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, ինչպես նաև Հայաստանի Մինիստրների խորհուրդը վերջին մի քանի տարիների ընթացքում, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով, ընդունել են մի շարք որոշումներ, որոնց մեջ մասնավորապես կարևոր տեղ է հատկացվել հողային ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը և հողերի ռեկուլտիվացմանը։ ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1975 թ. հուլիսին հատուկ անդրադարձավ այդ հարցին, նշելով, որ ՀՍՍՀ գյուղատնտեսության, արդյունաբերական շինարարության, շինանյութերի արդյունաբերության մինիստրությունների և մի շարք այլ կազմակերպությունների ու ժողովրդական դեպուտատների շրջանային սովետների գործկոմների կողմից անուշադրության է մատնվել քարհանքերի, ավազահանքերի ու բաց եղանակով շահագործվող այլ հանքերի օգտագործումից դուրս եկած տարածությունների ռեկուլտիվացման գործը և չի ապահովվել այդ մասին հողային օրենսդրության պահանջների կատարումը։

Հայտնի է, որ Հայաստանը բազմատեսակ շինանյութերի հարուստ շտեմարան է, որի փոքր տարածքի վրա կարելի է հանդիպել աշխարհում հայտնի շինանյութերի համարյա թե բոլոր տեսակներին, որոնց արդյունահանման համար Հայաստանի կառավարությունը տարբեր մինիստրությունների ու գերատեսչությունների հատկացրել է որոշակի հողատարածություններ։ Հայաստանի հողային ռեսուրսները խիստ սահմանափակ են, ուստի հարցի էությունն այն է, թե շինանյութերի արդյունահանման շարունակ աճող պահանջն ինչպես համատեղել գյուղատնտեսական արտադրության շահերի հետ։

Հասկանալի է, որ ժողովրդական տնտեսության զարգացման ներկա պայմաններում չի կարող խոսք լինել հանրապետությունում արդյունահանվող շինանյութերի ծավալի կրճատման մասին։ Ընդհակառակը, բոլորին հայտնի է, թե տուֆի, պեմզայի, քարալտի, տարբեր տեսակի մարմարների, տուֆի և բազալտի սալիկների, խարամի և այլ շինանյութերի արդյունահանումն ինչպիսի խոշոր նշանակություն ունի մեր և Միության այլ հանրապետություններում շինարարական աշխատանքների իրականացման գործում։ Այդուհանդերձ, չի կարելի անտեսել այն հանգամանքը, թե դրանց արդյունահանման պատճառով հողային ռեսուրսներին ինչպիսի վնաս է հասցվում։ Շինանյութեր արդյունահանող ամեն մի հանքավայր զբաղեցնում է մի քանի հարյուր մետր երկարություն ու լայնություն ունեցող հողամաս։ Եթե դրան ավելացնենք հանքի շահագործման ժամանակ առաջացած ոչ պիտանի ապարների և թափոնների զբաղեցրած որոշակի հողատարածությունը, ապա կստացվի շոշափելի մակերես, որը գյուղատնտեսական արտադրությունից հանվել և հատկացվել է շինանյութերի արտադրությանը։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. համապատասխան ցուցման համաձայն, բաց եղանակով շահագործվող ավազի, քարի, լիտոիդային պեմզայի և նման այլ շինանյութերի հանքվարչությունների օգտագործմանն է տրված 3692 հա հողատարածություն, որից 2873-ը հանձնված է շինանյութերի արդյունաբերության մինիստրությանը ենթակա հանքվարչություններին, իսկ մնացածը՝ այլ գերատեսչությունների։ Ներկայումս հանրապետությունում բաց եղանակով շահագործվող շինանյութերի հանքավայրերի թիվը հասնում է շուրջ 120-ի, որից 93-ը պատկանում է շինանյութերի արդյունաբերության մինիստրությանը, իսկ մնացած 27-ը՝ տարբեր մինիստրությունների ու գերատեսչությունների, որոնք մասնագիտացված չեն շինանյութերի արտադրության գործում[1]։ Շինանյութերի արդյունաբերության մինիստրության բաց եղանակով մշակվող 93 հանքավայրերն ըստ շինանյութերի տեսակների ունեն հետևյալ կառուցվածքը. տուֆի՝ 43, բազալտի՝ 28, հրաբխային խարամի՝ 5, գրանիտի և մարմարի՝ 6, բալաստի և ավազի՝ 3, լիտոիդային պեմզայի, պեռլիտի, պեմզանյութերի, կրաքարի, տրավերտինի, կավի և այլ շինանյութերի՝ 8 հանքեր։

Լեռնահանքային արդյունաբերության աշխատանքների ճիշտ ու գրագետ կատարումը նախատեսում է դրանց հերթականություն և սահմանված նորմաների պահպանում։ Դրա համաձայն բաց հանքերի մշակման աշխատանքները սկսում են մակաբացումից՝ մշակման ենթակա հանքավայրի մակերեսից սկզբում հեռացնում են բուսական շերտը կազմող հողը և այն կուտակում այդ նպատակով առանձնացված հատուկ վայրում, որպեսզի հանքավայրի սպառումից հետո օգտագործեն ռեկուլտիվացման համար՝ որպես հողային շերտ։

Հողի օգտագործման վերաբերյալ կառավարության կողմից 1978 թ. մշակած միջոցառումների համաձայն հանքվարչությունները հանքավայրերն օգտագործելուց հետո պարտավոր են այդ տարածությունները պիտանի դարձնել գյուղատնտեսական արտադրության համար և վերադարձնել կոլտնտեսություններին ու սովխոզներին։ Սակայն հանքվարչությունները, որպես կանոն, վերոհիշյալ որոշման պահանջները չեն կատարում, քանի որ երբ սկսում են հանքի բացման աշխատանքները, նրա մակերևույթի բուսական շերտը կազմող հողը խառնվում է հանքավայրի վերին շերտի ոչ պիտանի ապարների և հանույթի ժամանակ առաջացած թափոնների հետ։ Դրա հետևանքով էլ բուսական շերտը կազմող հողը և թափոնները հնարավոր չեն լինում օգտագործել գյուղատնտեսական կամ շինարարական նպատակներով։ Այժմ Հայաստանի շինանյութերի հանքերում կուտակված ապարների ու թափոնների ծավալը հասնում է մի քանի տասնյակ միլիոն խորանարդ մետրի։ Դրանք ծածկել են բավական մեծ տարածություններ, վերջիններս ոչ պիտանի դարձնելով գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների համար։ Ցավոք պետք է նկատել, որ հանրապետության գյուղատնտեսությանը պիտանի հողատարածությունների նկատմամբ նման արատավոր ու անտնտեսվար վերաբերմունքը շարունակվում է մինչև այժմ, որը և տասնյակ միլիոնավոր ռուբլիների վնասի պատճառ է դառնում։ Քանի որ Միության հանրապետությունների շարքում մեկ շնչին ընկնող հողատարածության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է ամենավերջին տեղերից մեկը, ուստի հանրապետությունում հողային ռեսուրսների պաշտպանությունը կորստից և դրանց գիտակից ու խնայողաբար օգտագործումը կենսական հարց է։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թ. ընդունած միջոցառումների համաձայն համապատասխան մինիստրություններն ու գերատեսչությունները սպառված հանքերի տարածությունները (486 հա մակերեսով) պարտավոր էին

---

[1] Հանքավայրերի թվաքանակի հաշվարկը կատարվել է մեր կողմից։

ենթարկել ռեկուլտիվացման, դարձնել գյուղատնտեսական արտադրության համար պիտանի և վերադարձնել կոլտնտեսություններին ու սովխոզներին։ Սակայն նշված որոշման պահանջները, ինչպես կտեսնենք ստորև, հիմնականում չեն կատարվել։ Այսպես, շինանյութերի արդյունաբերության մինիստրությունը պետք է 1978—1980 թթ. գյուղատնտեսության համար պիտանի դարձներ 321 հա հողատարածություն, սակայն բավարարվել է սպառված հանքերի 104 հա փոս ընկած տեղանքն այն ապարների ու թափոնների միջոցով հարթեցնելով, որոնք գյուղատնտեսական արտադրության համար չեն կարող օգտագործելի դարձնել տվյալ հողակտորը։ Մինչդեռ, հաստատված կարգի համաձայն, մինիստրության հանքվարչությունները պարտավոր էին սպառված հանքատեղը հարթեցնելուց հետո ստեղծել հողային անհրաժեշտ շերտ, որտեղ հնարավոր լիներ աճեցնել գյուղատնտեսական կուլտուրաներ։

Արդյունաբերական շինարարության մինիստրության կազմակերպությունները նշված ժամանակամիջոցում պարտավոր էին վերականգնել և կոլտնտեսություններին ու սովխոզներին հանձնել 77 հա հողատարածություն, սակայն առ այսօր այդ ուղղությամբ ոչ մի աշխատանք չի կատարվել։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հաստատած պլանի համաձայն ռեկուլտիվացման ենթակա հողերի մեծ մասը՝ 456 հա, պետք է կոլտնտեսություններին ու սովխոզներին հանձնվեր 1978—1979 թթ. ընթացքում (տե՛ս № 1 աղյուսակը)։ Այդ հողերի կեսից ավելին բաժին է ընկնում Արարատյան դաշտին, որտեղ յուրաքանչյուր հեկտարից կարելի է ստանալ հազարավոր ռուբլիների արժողության բանջարաբոստանային կուլտուրաների բերք։ Սակայն աշխատանքների ձախողման հետևանքով ժողովրդական տնտեսությունը զրկվել ու զրկվում է ինչպես նյութական արժեքներից, այնպես էլ հողային ռեսուրսներից։

Աղյուսակ № 1

1978—1980 թթ. հողերի ռեկուլտիվացման պլանն ըստ մինիստրությունների ու գերատեսչությունների (հեկտար)[2]

Մինիստրության, գերատեսչության անվանումը	1978 թ.	1979 թ.	1980 թ.	ընդամենը
ՀՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստրություն	118	173	30	321
ՀՍՍՀ արդյունաբերական շինարարության մինիստրություն	26	51	—	77
ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրություն	32	—	—	32
այլ մինիստրություններ ու գերատեսչություններ	56	—	—	56
ընդամենը՝	232	224	30	486

Հողերի վերականգնման աշխատանքներին որոշակի թափ հաղորդելու նպատակով 11-րդ հնգամյակի առաջին տարվանից շինանյութերի արդյունաբերության մինիստրության կոլեգիայի որոշմամբ սպառված հանքերի հողերի վերականգնման ֆունկցիան հանքվարչություններից հանվեց ու դրվեց մասնագիտացված աշխատանքների կատարման վարչության վրա, որի պարտականությունների մեջ մտնում են բաց եղանակով մշակվող նոր հանքերի մա-

2 Տվյալները վերցված են ՀՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստրությունից։

Աղյուսակ № 2

1978—1980 թթ. հանրապետությունում հողերի ռեկուլտիվացման պլանն ըստ տերիտորիալ շրջանների[3]

Շրջանների անվանումը	1978 թ.	1979 թ.	1980 թ.	ընդամենը
Հոկտեմբերյան	49	67,4	—	116,4
Էջմիածին	34	30	—	64
Մասիս	18	15	—	33
Նաիրի	29	—	—	29
Թալին	5	4,2	6	15,2
Աշտարակ	6	—	—	6
Արթիկ	16	47,4	—	63,4
Մնացած շրջաններ	75	60	24	159
ընդամենը՝	232	224	30	486

կաբացումը, հանքի շահագործման նախապատրաստումը, պայթեցումը, սպառված հանքերի հողատարածությունների վերականգնումն ու հանձնումը կոլտնտեսություններին և սովխոզներին։ Այս քայլը, թվում է, պետք է դրական պատասխան տար վերը բարձրացված հարցերի լուծմանը, սակայն վարչության գործունեությունը վկայում է, որ այն նման ծավալի աշխատանքներ չի կարող կատարել և շարունակում է աշխատել հին ձևով՝ զբաղվելով շինանյութերի արդյունահանման հանքերում անհրաժեշտ պայթեցման աշխատանքներ կատարելով և սպառված հանքավայրերի տեղանքը ապարների ու թափոնների հետ խառնված հողի միջոցով հարթեցնելով։ Եվ քանի որ տարիների ընթացքում ապարներն ու թափոնները ձնաջրերի, քամու և անձրևի հետևանքով լվացվել ու փաստորեն հողազրկվել են, հարթեցումը հիմնականում կատարվում է ապարների ու թափոնների հաշվին։ Բնականաբար, նման ձևով վերականգնած հողակտորները չեն կարող օգտագործվել գյուղատնտեսության մեջ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հողերի վերականգնման աշխատանքներն առանց նախագծերի և անորակ կատարվելու հետևանքով ռեկուլտիվացման ենթարկված հողերի մեծ մասը տնտեսությունները չեն օգտագործում։ Հողերի ռեկուլտիվացման նախագծերի կազմման աշխատանքների կատարման պարտականությունը դրված է ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության «Հայպետհողշինախագիծ» ինստիտուտի վրա։ Հողերի ռեկուլտիվացման պլաններ ունեցող մինիստրություններն ու գերատեսչությունները պարտավոր են յուրաքանչյուր տարի հայտեր ներկայացնել նախագծեր ու նախահաշիվներ կազմելու վերաբերյալ, որտեղ նշված լինեն ռեկուլտիվացման համար պահանջվող աշխատանքների տեսակները և ծախսի գումարները։ Նախագծեր և նախահաշիվներ ունենալն անհրաժեշտ է երկու նպատակով. առաջին, որ հանքերի համար հողամասեր ունեցող մինիստրությունները, գերատեսչությունները և մյուս կազմակերպությունները հանքերը կօգտագործեն նախագծերին համապատասխան, դրանով իսկ հատուկ ուշադրություն կդարձվի քարհանքերի, ավազահանքերի և այլնի արդյունավետ օգտագործմանը, շահագործումը կկատարվի պաշարների լրիվ խորությամբ, հանքերում կստեղծվի կարգուկանոն, վերջ կտրվի շինանյութերի հանույթի ու հողերի օգտագործման անտնտեսվարությանը։ Երկրորդ. նախօրոք (մեկ կամ երկու

3 Նույն տեղում։

տարի առաջ) հայտնի կլինեն ծախսի այն գումարները, որոնք անհրաժեշտ են կատարել հանքվարչությանը հանձնված որևէ տեղամասի ռեկուլտիվացման համար։

Մեր հանրապետության կառավարությունը զգալի միջոցներ է հատկացնում սպառված հանքերի հողատարածությունների վերականգնման համար և տարիների ընթացքում այդ գումարների արդյունավետ ու նպատակային օգտագործման դեպքում հնարավոր կլիներ հարյուրավոր հեկտար հողատարածություններ գյուղատնտեսության համար պիտանի դարձնել։ Այսպես, օրինակ, միայն վերջին վեց տարիներին Հայաստանի շինանյութերի արդյունաբերության մինիստրության ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հաշվին կենտրոնացվել է 3 մլն ռ.[4]։ Այս գումարի նպատակային ու արդյունավետ օգտագործման դեպքում կարելի էր լիովին իրագործել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1975 թ. և 1978 թ. ընդունած միջոցառումները հողերի վերականգնման վերաբերյալ։

Ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող ծախսի յուրաքանչյուր տեսակ պետք է ուղղակի կամ անուղղակի առնչվի տվյալ արտադրանքի արտադրության հետ և ձեռնարկությունը շահագրգռված լինի ու պայքարի ծախսի ամեն մի տարրի խնայողության համար։ Սակայն շինանյութերի արդյունաբերության մինիստրության առանձին ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի պլանային ինքնարժեքի ծախսերի կազմում հաշվարկված հողերի վերականգնման գումարները մեթոդոլոգիական տեսակետից ոչ մի սկզբունքով չեն հիմնավորվում։ Ինչպես հայտնի է, հողերի վերականգնման ծախսի գումարներն ուղղակի առնչվում են այդ հողատարածություններից շինանյութեր արդյունահանող ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հետ։ Եվ քանի որ այդ հողատարածություններն արտադրության բնույթից ելնելով են գյուղատնտեսության օգտագործման համար ժամանակավորապես դարձել ոչ պիտանի և որոշակի ծախսեր կատարելուց հետո է, որ դրանք կարելի է վերադարձնել գյուղատնտեսությանը, ապա նման ծախսերը պետք է հաշվարկվեն այդ հողերից ստացվող ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ։ Սակայն ինչպես երևում է № 3 աղյուսակից, Արզնու բյուրեղապակու գործարանը 1975—1980 թթ. շինանյութերի արդյունաբերության մինիստրության կենտրոնացված հաշվին է փոխանցել 240 հազ. ռ., այն դեպքում, երբ ոչ մի առնչություն չունի հողերից արդյունահանվող շինանյութերի հետ։ Մինիստրությանը ենթակա յոթ ձեռնարկություններ (Արզնու բյուրեղապակու գործարան, Երևանի կերամիկական իրերի կոմբինատ, Լենինականի ապակու գործարան, Արթիկի տուֆաբլոկների կոմբինատ, «Հայմարմար» կոմբինատ, Նուռնուսի քարի մշակման գործարան, Մասնագիտացված աշխատանքների վարչություն) իրենց ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հաշվին յուրաքանչյուր տարի 130 հազ. ռ. հատկացում են կատարում (տե՛ս աղյուսակ № 3), հողերի ռեկուլտիվացման հետ չունենալով ոչ մի առնչություն։ Հասկանալի է, որ նման ծախսերի կատարումը բացասական ազդեցություն է թողնում ձեռնարկության խթանման ֆոնդերի մակարդակի վրա և չի կարող ճիշտ արտահայտել տնտեսական մի շարք ցուցանիշների իսկությունը։ Բացի այդ, տնտեսագիտական ոչ մի հաշվարկով չի կարելի հիմնավորել ու արդարացնել այն երևույթը, երբ մեկ միավոր հողատարածության ռեկուլտիվացումը մոտավորապես նույն պայմանների դեպքում կատարվում է ծախսերի մեծ տարբերությամբ։ Այսպես, օրինակ, 1978—1980 թթ. նախատեսված էր Թալինի շրջանում ռեկուլտիվացման ենթարկել 15,2 հա հող՝ այդ նպատակով շրջանի քարհանքվարչության, Կարմրաշենի թեթև լցանյութերի և Արագածի պեռլիտ գործարանների ապրանքային արտ-

[4] Տվյալները վերցված են ՀՍՍՀ շինանյութերի արդյունաբերության մինիստրության ֆինրաժնից։

Աղյուսակ № 3

Շինանյութերի արդյունաբերության ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հաշվին պլանավորված ռեկուլտիվացման դումարները 1975—1980 թթ. համար (հազ. ռ.)[5]

Ձեռնարկության անվանումը	1975 թ.	1976 թ.	1977 թ.	1978 թ.	1979 թ.	1980 թ.
Արարատի ցեմենտ-շիֆերի կոմբինատ	20	20	20	20	20	20
Երևանի կերամիկական իրերի կոմբինատ	10	10	10	10	10	10
Արզնու բյուրեղազակու գործարան	40	40	40	40	40	40
Լենինականի ապակու գործարան	25	25	25	25	25	25
Ջաջուռի կրի գործարան	2	2	2	2	2	2
Հոկտեմբերյանի շինանյութերի կոմբինատ	15	15	15	15	15	15
Լենինականի քարհանքվարչություն	20	20	20	20	20	20
Արթիկի տուֆաբլոկների կոմբինատ	30	30	30	30	30	30
Արթիկի տուֆ	55	55	55	55	55	55
Պեմզաշենի քարհանքվարչություն	15	15	15	15	15	15
Թալինի քարհանքվարչություն	17	17	17	17	17	17
Աշտարակի քարհանքվարչություն	5	5	5	5	5	5
Մարալիկի շինանյութերի կոմբինատ	5	5	5	5	5	5
«Կիրներուդ» կոմբինատ	40	40	40	40	40	40
«Հայմարմար» կոմբինատ	5	5	5	5	5	5
Անիի «Պեմզա» կոմբինատ	10	10	10	10	10	10
Արագածի պեռլիտ գործարան	50	50	50	50	50	50
Կարմրաշենի թեթև լցանյութերի գործարան	50	50	50	50	50	50
Ազիզբեկովի շինանյութերի կոմբինատ	18	18	18	18	18	18
Էջմիածնի շինանյութերի կոմբինատ	4	4	4	4	4	4
Արովյանի շինանյութերի կոմբինատ	8	8	8	8	8	8
Սպանդարյանի մանրող-տեսակավորող գործարան	10	10	10	10	10	10
Մարմրաշենի խոշոր բլոկների կոմբինատ	11	11	11	11	11	11
Նուռնուսի քարի մշակման գործարան	10	10	10	10	10	10
Մասնագիտացված աշխատանքների վարչություն	20	20	20	20	20	20
Ախսիանի շինանյութերի կոմբինատ	5	5	5	5	5	5
ընդամենը՝	500	500	500	500	500	500

տադրանքի հաշվին հատկացնելով 351 հազ. ռ. (տե՛ս աղյուսակ № 2, № 3)։ Մինչդեռ այդ նույն ժամանակամիջոցում Արթիկի շրջանում 63,4 հա հող ռեկուլտիվացման ենթարկելու համար Արթիկ տուֆի և Պեմզաշենի քարհանքվարչության ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հաշվին հաշվարկվել է 210 հազ. ռ. (տե՛ս աղյուսակ № 2, № 3)։ Նման երևույթից խուսափելու համար ցանկալի է, որ վերադաս կազմակերպությունները հողերի ռեկուլտիվացման նպատակով տրամադրվող գումարները, ձեռնարկության ապրանքային արտադրանքի ինքնարժեքի հաշվին պլանավորելու ժամանակ, հնարավորին

5 Տվյալները վերցված են նույն բաժնից։

սահմաններում ճիշտ համամասնություն սահմանեն ռեկուլտիվացման ենթակա հողատարածությունների և այդ նպատակով նախատեսվող ծախսերի աղբյուրների միջև։

Հողերի ռեկուլտիվացման նպատակով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման համար հարկավոր է օգտագործել տնտեսական ու վարչական բոլոր լծակները՝ կանխելու հողային ռեսուրսների բոլոր կարգի շռայլումներն ու հաղթահարելու ամեն տեսակ խոչընդոտները. միայն այդ ճանապարհով հնարավոր կդառնա գյուղատնտեսությանը վերադարձնել սպառված քարհանքերի և ավազահանքերի տարածքները։

К ВОПРОСУ РЕКУЛЬТИВАЦИИ ЗЕМЕЛЬ В АРМЕНИИ

КАДЖИК ГЮЛУМЯН, АРТАШЕС БАГДАСАРЯН

Резюме

Промышленность строительных материалов занимает одно из ведущих мест в республике благодаря наличию богатых месторождений высококачественных стройматериалов на территории Армении. В деле осуществления вскрышных работ карьеров и организации безотходного производства стройматериалов все еще имеются серьезные недостатки. В результате территории карьеров зачастую завалены отходами, что сильно затрудняет использование последних в строительных целях, сдерживает осуществление мероприятий по восстановлению земель, пригодных для сельского хозяйства. Производство стройматериалов следует осуществлять более эффективно и рационально, в полном объеме, на основе имеющихся проектов.

Анализируется вопрос применения источников финансирования рекультивационных работ карьеров; отмечается, что планирование средств рекультивации за счет себестоимости предприятий подлежит дальнейшему совершенствованию. Предлагаются новые методы разработки месторождений стройматериалов, в особенности в производстве вскрышных работ, а также другие неотложные меры по осуществлению горноподготовительных и рекультивационных работ.